

Աղչեկը ծնողացը համար անպէս գանձ է,
ինչ օգկային է.

Թէ որ կուզես գովվելու, սորվէ զճերմակը
սեվի դարձնելու:

Մի խնտայ թէ ունիս. ու մի վըզըայ¹ թէ
չունիս տղայ.

Էրկան է եզին լիզուն, բայց չի կարնայ
զուրուցելու:

Խեվը, խեվ է, զատկին կիրակին ա:

Ճիրախ կի վարէ աղքատ մարդը, որ համ-
պրէ ըզխոճին ունենայը:

Տուր բան խեւին ու կըրակ կուտայ տանդ:

Չամիչ գընայ² ու կոկան դարձաւ:

Ծուռ նրստինք ու շիտակ զուրուցինք:

Մըխանքը կըլայ ծուռ ա ըլլալու. նմա⁴ թէ
մուխը ելէ շիտակ:

Ծուռ ծառին, ծուռ ճիվ³:

Շուն զարկ ու պան վաստրկէ:

Քիչ բարձիր ու չուստ դարձիր:

Ինչուրի չի զարնըվի, չի արնըվի:

Քիչը կօգտի, շատը կերթայ:

Կուշտը քաղցածին, մանտը կի բըրդէ:

Ասողին լող:

Լուքուցին շունը Լիբսքան⁹ գնացիլ է. ու
եա ընտրը շուտ դարձիլ է:

Չուզիմ անպէս քալելու, ընտրը Պիագային
չունը:

Աղքատը թէ որ որ հաց ու պանիր ունի,
քըշըրը քուն չունի:

Գարդան⁵ անպէս կի համարէ, թէ իրեն
վըրդին է ընք ալ¹⁰ ըրինտ թըռչունը:

Ամէն անտղվաթուծիւն, մէկ մէկ խրատ.

Անբան⁶ մարդը, երբ հաց կուտէ առողջ
է. երբ բանի հիւանտ է:

Նըզովքը, նըզովողին վըրայ կըննի:

Ինչուր ի չի տեսնուս ըզջուրը, մի հանի
զըարուկը⁷:

Անցած բանի ետէվանց մի մը շխուրվի⁸:

Ալ աղէկն է արդար աչքը. քան մեղաւոր
շաղըշը:

Ըզաստուճմէ պահած գարը¹¹, չուտի գալը:

Թուխու ձուկին¹² կօգտի մէկ գաւաթմն ջուր:

Առաջ գործէ, ետեւ պարծենցիր:

Քաղցածը՝ քընուն մէջ հաց, ծարաւը՝ ջուր
կի տեսնու:

Ինչ էլը կի դատէ նայ, ձին կուտէ:

Ինչուր ի կուշտը քաղցածին տայ, քաղ-
ցածը քաղցուն մեռնելու կըլայ:

Ըզում հացը կուտիմ, ըզնարա անունը
կի իշեմ:

Լացիր հետ լացողին, ու խնտացիր հետ
խնտացողին:

Խըրատ խեւին, սապըն սեւին:

Կատուն, որը չի հասաւ զմիսը, ասաւ. Ասոր
ուրբաթ է:

Աս խօսքովը հաց հաց, փըրը չի կիշտանայ:

Էկիլէ, գնացիլէ, բայց տեղը չի մնացի
պարապ:

Մի եփի միս ու ձուկը, մէկ պտկին մէջ:
Ճըրբալը ըզճիրախքալը չի լուսաւորի:

Մարդ մարդու կըլայ խաղող տալու, բայց
պտղաբերութիւն չի կարնայ տալու:

Վով մեղըր կի ծախէ, ըզմատվընըր կի
ըղէ:

Շունը խասափը գնացիլէ, օր վըտ¹ բերէ.
ու հոն թողիլէ ըզվըտը:

Վով չուստ, նա կուշտ:

Տասը տարպա չափէ. ու մէմը կըտրէ:

Օգկային² ձեռքը դիժար է փուշ դուս
հանելու:

Օգկային տղէն, չի գառնայ որդիդ:

Վով պարք³ ունի խելք չունի. վով խելք
ունի պարք չունի:

ՅՈՎՃ. ԱՆՆՅԻ



Կ Ե Ն Ս Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Մ Ի Բ Տ Օ Վ Լ Ը Թ Ը Ե Ս Ը Ղ Մ Ո Ս Ը

Կենսագրական տեղեկութիւնք ԱՄԻԲՏՕՎԼԸԹ ԸԵՍԸՂՄՈՍԸ
կին վրայ:

Սուրատեանց Գեոր. Տէր Մեւքիսէդէկ
Սրբազան Արքեպիսկոպոսին շնորհիւ, բախտ ու-
նեցայ այս օրերս աչքէ անցունելու այս հա-
տորը, որ քառագարեան եւ աւելի հնութիւն
ունեցող ընտիր ձեռագիր մըն է, եւ կը կրէ
Ամիրտովաթ հայկազն բժշկին անունը:

Առաջին անգամն է որ այս անուամբ
Սաղմոս մը կը յիշատակուի հրապարակի մէջ.
Նպատակս բուն Սաղմոսին վըրայ խօսիլ չէ, այլ
հրատարակել անոր վախճանն եղած մէկ կա-

1 ողբալ. — 2 գնեցի, վաճառեցի. — 3 ճիւղ. —
4 Նմա, Գրանտիւրանիոյ հայոց լեզուաւը, միայն կը նշա-
նակէ. — 5 Աղ.ա.ա. — 6 պոյնքն. առանց գործքի. —
7 հողաթափ, կօշիկ. — 8 տրամիլ. — 9 Լայրցիկ քաղաքը.
— 10 ամենէն. — 11 Գառն, սլխար. — 12 շորցած, աղած
ձուկ:

1 ողբ. — 2 Ուրիշ. — 3 պոյնքն, պարտք.